Առանձին ուսումնասիրություններ վկայում են այն, որ հարգագաթային քրոնիկական օջախի ձևավորմանը էական մասնակցություն կարող են ունենալ նաև շողասնկերը, ընդ որում *P. Sakellariou* (1996) գտնում է, որ գագաթային ակտինոմիկոզը իրականում շատ ավելի հաճախակի հանդիպող երևույթ է, քան ենթադրում են հետազոտողները, և որ թերախտոքոչման հիմնական պատճառը դժվարին հյուսվածաբանական հետազոտության իրականացումն է: Կարծիք է հնչում այն մասին, որ պահպանողական բուժմանը դժվարությամբ ենթարկվող ու կայուն քրոնիկական ախտահարումների պարագայում օջախում հաճախ հայտնաբերվում են խմորասնկեր, որոնց թվում՝ ըստ բջջային ձևակազմության, աճի, ածխաջրատների յուրացման բնութագրի, առանձնացվել են *Candida* խմբի սնկերի շուրջ 20 շտամեր - *C. glabrata*, *C. albicans*, *C. guilliermondii*, *C. inconspicua*, *Geotrichum candidum* և այլն (*Waltimo T.*, et. al. 1997): Սակայն, միևնույն հեղինակների մեկ այլ հետազոտությամբ /ներառելով պոլիմերազային շղթայական ռեակցիայի, հյուսվածաբանական ու իմունաբանական եղանակները/ պարզվել է (*Waltimo T.*, et. al. 2003), որ գագաթային գրանուլեմում բացակայում են խմորասնկերի տեսակները: Ըստ *M. Egan et. al.* (2002), արմատախողովակներում *Candida* խմբի սնկեր հայտնաբերվում են մոտ 10 % դեպքերում, ընդ որում, նշված բացահայտումներն անպայմանորեն ուղեկցվում են խմորասնկերի հայտնաբերմամբ նաև թթում:

Պերիոդոնտիտիսների ախտածնության մեջ անչափ կարևորվում է մանրէների կողմից սինթեզվող /ֆերմենտներ, էկզոտոքսիններ, տարբեր սպիտակուցներ/ կամ դրանց կառուցվածքային բաղկացուցիչ հանդիսացող /լիպոպոլիսախարիդ, պեպտոգլիկան, արտաքին թաղանթի սպիտակուցներ/ գործոնների ազդեցությունը (*Siqueira J. Jr.*, *Rôças I.* 2007): Հարգագաթային քրոնիկական բորբոքումը զարգանում է արմատախողովակների պարունակության /առաջին հերթին բակտերիաների/ կողմից մշտական անտիգենային խթանման հետևանքով: Այսպես, որպես նման խթանիչներ դիտարկվում են *Bacteroides buccae*-ի լիպոպոլիսախարիդները և 38K բջջային սպիտակուցը (*Tani N.* 1989), որոնք փորձարարական պայմաններում հանգեցրել են պերիֆերիկ մոնոցիտների միգրացիոն ակտիվության ու IL-1-ի սինթեզի ուժեղացմանը, T- և B-լիմֆոցիտների կուտակմանը և այլն: Ավելին, փորձարարական առնետների մոտ վարակական պերիոդոնտիտիսների մոդելավորման ընթացքում պարզվել է (*Stashenko P.*, et. al. 1992), որ իմուն բջջային տարրերի բաշխումը պայմանավորված է նաև պրոցեսի ակտիվությամբ, մասնավորապես, ակտիվ փուլում /առաջին 15 օրերի ընթացքում/ հարգագաթային ախտաբանական օջախում գերակշռում են T-հելպերները, իսկ ախտահարման կայունացման կամ քրոնիկական փուլում՝ T-

սուպրեստրները: Ընդ որում, ոսկրի ռեգորբոսիվ երևույթներն ավելի ինտենսիվ են ակտիվ փուլում, ինչը հետևանք է T-հեյլերների կողմից համապատասխան միջնորդանյութերի /IL-1, TNF/ բջջային սինթեզի խթանման:

Պարզվել է, որ սուր, քրոնիկական պերիոդոնտիտիսների, ինչպես նաև գազաթային թարախակոյտի դեպքերում բակտերիալ էնդոտոքսինների բաշխումը ևս ցուցաբերում է տարբերություններ, ընդ որում դրանց առավել նվազագույն խտությունները հայտնաբերվել են հատկապես քրոնիկական ընթացքի ախտահարումների պարագայում, բացի այդ դրանք ցուցաբերել են որոշակի կապեր կլինիկական ախտանշանների ու ոսկրի ռեգորբոսիվ պրոցեսի ինտենսիվության հետ (Hu T., et. al. 2004):

Այսպիսով, հարգագաթային պերիոդոնտի քրոնիկական բորբոքային հիվանդությունների առաջացման հարցում ախտածին մանրէների յճորոշ մասնակցությունն անտարակուսելի է, սակայն հարց է առաջանում, թե հատկապես ո՞ր մանրէներն են պայմանավորում պերիոդոնտիտիսների զարգացումը, որոնց քանակը տարեցտարի ավելանում է (Siqueira J. 2002): Վերջին տարիների ընթացքում իրականացված ուսումնասիրությունները հավանական են համարում նույնիսկ վիրուսային /Epstein-Barr-ի վիրուս, ցիտոմեգալովիրուս/ վարակի նշանակությունը քրոնիկական պերիոդոնտիտիսների զարգացման հարցում (Makino K., et. al. 2015; Popovic J., et. al. 2015; Jakovljevic A., et. al. 2016): Բացի այդ, պարզվում է, որ քրոնիկական ախտահարումների ժամանակ մանրէային կազմի առանձնահատկությունները որոշակի կապերի մեջ են գտնվում հիվանդության ընթացքի, կլինիկական դրսևորումների հետ:

## Գրականություն

1. Accorsi S., Lavagnoli G., Frigeri S., Fiamminghi L. Significance of the bacterial flora in the etiology of apical periodontitis. Qualitative, quantitative and topographical aspects. // G. Endodonzia., 1990, 4 (2), 22-30,
2. Assed S., Ito I., Leonardo M., Silva L., Lopatin D. Anaerobic microorganisms in root canals of human teeth with chronic apical periodontitis detected by indirect immunofluorescence. // Endod. Dent. Traumatol., 1996, 12 (2), 66-69,
3. Blome B., Braun A., Sobarzo V., Jepsen S. Molecular identification and quantification of bacteria from endodontic infections using real-time polymerase chain reaction. // Oral Microbiol. Immunol., 2008, 23 (5), 384-390,
4. Buonavoglia A., Latronico F., Pirani C., Greco M., Corrente M., Prati C. Symptomatic and asymptomatic apical periodontitis associated with red complex bacteria: clinical and microbiological evaluation. // Odontology, 2013, 101 (1), 84-88,
5. Didilescu A., Rusu D., Anghel A., Nica L., Iliescu A., Greabu M., Bancescu G., Stratul S. Investigation of six selected bacterial species in endo-periodontal lesions. // Int. Endod. J., 2012, 45 (3), 282-293,
6. Egan M., Spratt D., Ng Y., Lam J., Moles D., Gulabivala K. Prevalence of yeasts in saliva and root canals of teeth associated with apical periodontitis. // Int. Endod. J., 2002, 35 (4), 321-329,
7. Foschi F., Cavrini F., Montebugnoli L., Stashenko P., Sambri V., Prati C. Detection of bacteria in endodontic samples by polymerase chain reaction assays and association with defined clinical signs in Italian patients. // Oral Microbiol. Immunol., 2005, 20 (5), 289-295,
8. Fujii R., Saito Y., Tokura Y., Nakagawa K., Okuda K., Ishihara K. Characterization of bacterial flora in persistent apical periodontitis lesions. // Oral Microbiol. Immunol., 2009, 24 (6), 502-505,
9. Guo H., Wang J. Bacterial biofilm on the apical external root surfaces of human teeth associated with chronic periradicular lesions. // Beijing Da Xue Xue Bao., 2009, 18, 41 (5), 571-574,
10. Guo H., Yue L., Gao Y. Status of bacterial colonization in infected root canal. // Beijing Da Xue Xue Bao., 2011, 18, 43 (1), 26-28,
11. Hong B., Lee T., Lim S., Chang S., Park J., Han S., Zhu Q., Safavi K., Fouad A., Kum K. Microbial analysis in primary and persistent endodontic infections by using pyrosequencing. // J. Endod., 2013, 39 (9), 1136-1140,
12. Hong L., Hai J, Yan-Yan H, Shenghui Y, Benxiang H. Colonization of Porphyromonas endodontalis in primary and secondary endodontic infections. // Hua Xi Kou Qiang Yi Xue Za Zhi., 2015, 33 (1), 88-92,
13. Hu T., Tan H., Xu Y. Study on endotoxin levels of acute and chronic periapical periodontitis. // Hua Xi Kou Qiang Yi Xue Za Zhi., 2004, 22 (1), 52-53,
14. Huang D., Fu C., Zhou X. Association between Bacteroides forsythus in the infected root canals and clinical symptoms of chronic apical periodontitis. // Sichuan Da Xue Xue Bao Yi Xue Ban., 2005, 36 (1), 46-49,
15. Huang D., Ling J., Fu C., Luo H., Zhou X. Colonization relationship between Porphyromonas gingivalis and Bacteroides forsythus in the infected root canals with chronic apical periodontitis. // Shanghai Kou Qiang Yi Xue., 2005, 14 (5), 531-535,

16. Jakovljevic A., Andric M., Miletic M., Beljic-Ivanovic K., Knezevic A., Mojsilovic S., Milasin J. Epstein-Barr virus infection induces bone resorption in apical periodontitis via increased production of reactive oxygen species. // *Med. Hypotheses*, 2016, 94, 40-42,
17. Ji H., Li H., He Y., Hou B. Study of association between *Parvimonas micra* and pulp dominant pathogens in the infected root canals with chronic periradicular periodontitis. // *Zhonghua Kou Qiang Yi Xue Za Zhi.*, 2014, 49 (8), 495-499,
18. Kayaoglu G., Ørstavik D. Virulence factors of *Enterococcus faecalis*: relationship to endodontic disease. // *Crit. Rev. Oral Biol. Med.*, 2004, 1, 15 (5), 308-320,
19. Kitano T., Mikami Y., Iwase T., Asano M., Komiyama K. Loop-mediated isothermal amplification combined with PCR and immunohistochemistry for detecting *Porphyromonas gingivalis* in periapical periodontitis. // *J. Oral Sci.*, 2016, 58 (2), 163-169,
20. Lacević A., Bilalović N., Kapić A. Bacterial aggregation in infected root canal. // *Bosn. J. Basic Med. Sci.*, 2005, 5 (4), 35-39,
21. Lacević A., Pojskić L., Lojo N., Ramić J., Bajrović K. *Tannerella forsythia* detected in infected root canals using nested PCR. // *Am. J. Dent.*, 2009, 22 (4), 211-214,
22. Li Y., Sun K., Ye G., Liang Y., Pan H., Wang G., Zhao Y., Pan J., Zhang J., Fang J. Evaluation of Cold Plasma Treatment and Safety in Disinfecting 3-week Root Canal *Enterococcus faecalis* Biofilm In Vitro. // *J. Endod.*, 2015, 41 (8), 1325-1330,
23. Liang J. Anaerobes in infected canals: a preliminary study. // *Zhonghua Kou Qiang Yi Xue Za Zhi.*, 1991, 26 (1), 28-30, 62-63,
24. Lin S., Sela G., Sprecher H. Periopathogenic bacteria in persistent periapical lesions: an in vivo prospective study. // *J. Periodontol.*, 2007, 78 (5), 905-908,
25. Lu W., Wu F., Zhou X., Wu L., Li M., Ren B., Guo Q., Huang R., Li J., Xiao L., Li Y. Isolation and identification of aerobic and facultative anaerobic bacteria in the oral cavity. // *Nan Fang Yi Ke Da Xue Xue Bao.*, 2015, 35 (12), 1710-1714,
26. Mahmoudpour A., Rahimi S., Sina M., Soroush M., Shahi S., Asl-Aminabadi N. Isolation and identification of *Enterococcus faecalis* from necrotic root canals using multiplex PCR. // *J. Oral Sci.*, 2007, 49 (3), 221-227,
27. Makino K., Takeichi O., Hatori K., Imai K., Ochiai K., Ogiso B. Epstein-Barr virus infection in chronically inflamed periapical granulomas. // *PLoS One*, 2015, 17, 10 (4):e0121548. doi: 10.1371/journal.pone.0121548. eCollection 2015,
28. Martinho F., Chiesa W., Leite F., Cirelli J., Gomes B. Antigenic activity of bacterial endodontic contents from primary root canal infection with periapical lesions against macrophage in the release of interleukin-1beta and tumor necrosis factor alpha. // *J. Endod.*, 2010 36 (9), 1467-1474,
29. Noda M., Komatsu H., Inoue S., Sano H. Antibiotic susceptibility of bacteria detected from the root canal exudate of persistent apical periodontitis. // *J. Endod.*, 2000, 26 (4), 221-224,
30. Noiri Y., Ehara A., Kawahara T., Takemura N., Ebisu S. Participation of bacterial biofilms in refractory and chronic periapical periodontitis. // *J. Endod.*, 2002, 28 (10), 679-683,
31. Ozbek S., Ozbek A., Erdorgan A. Analysis of *Enterococcus faecalis* in samples from Turkish patients with primary endodontic infections and failed endodontic treatment by real-time PCR SYBR green method. // *J. Appl. Oral Sci.*, 2009, 17 (5), 370-374,
32. Peciuliene V., Reynaud A., Balciuniene I., Haapasalo M. Isolation of yeasts and enteric bacteria in root-filled teeth with chronic apical periodontitis. // *Int. Endod. J.*, 2001, 34 (6), 429-434,
33. Pereira R., Rodrigues V., Furtado W., Gueiros S., Pereira G., Avila-Campos M. Microbial analysis of root canal and periradicular lesion associated to teeth with endodontic failure. // *Anaerobe*, 2017, 27, 48, 12-18,
34. Popovic J., Gasic J., Zivkovic S., Kesic L., Mitic A., Nikolic M., Milasin J. Prevalence of Human Cytomegalovirus and Epstein-Barr Virus in Chronic Periapical Lesions. // *Intervirolgy*, 2015, 58 (5), 271-277,
35. Popovska L., Zabokova Bilbilova E., Mircheva E., Stojanovska V. Chronic periapical lesions: correlations with clinical finding. // *Pril (Makedon Akad Nauk Umjet Odd Med Nauki)*, 2014, 35 (1), 263-269,
36. Richardson N., Mordan N., Figueiredo J., Ng Y., Gulabivala K. Microflora in teeth associated with apical periodontitis: a methodological observational study comparing two protocols and three microscopy techniques. // *Int. Endod. J.*, 2009, 42 (10), 908-921,
37. Rôças I., Siqueira J. Jr., Andrade A., Uzeda M. Oral treponemes in primary root canal infections as detected by nested PCR. // *Int. Endod. J.*, 2003, 36 (1), 20-26,
38. Rôças I., Siqueira J. Jr., Santos K. Association of *Enterococcus faecalis* with different forms of periradicular diseases. // *J. Endod.*, 2004, 30 (5), 315-320,
39. Rôças I., Siqueira J. Jr. Occurrence of two newly named oral treponemes - *Treponema parvum* and *Treponema putidum* - in primary endodontic infections. // *Oral Microbiol. Immunol.*, 2005, 20 (6), 372-375,
40. Rôças I., Siqueira J. Jr. Culture-independent detection of *Eikenella corrodens* and *Veillonella parvula* in primary endodontic infections. // *J. Endod.*, 2006, 32 (6), 509-512,
41. Rôças I., Siqueira J. Jr. Root canal microbiota of teeth with chronic apical periodontitis. // *J. Clin. Microbiol.*, 2008, 46 (11), 3599-3606,

42. Rôças I., Siqueira J. Jr. Prevalence of new candidate pathogens *Prevotella baroniae*, *Prevotella multisaccharivorax* and as-yet-uncultivated *Bacteroidetes* clone X083 in primary endodontic infections. // *J. Endod.*, 2009, 35 (10), 1359-1362,
43. Sakamoto M., Rôças I., Siqueira J. Jr, Benno Y. Molecular analysis of bacteria in asymptomatic and symptomatic endodontic infections. // *Oral Microbiol. Immunol.*, 2006, 21 (2), 112-122,
44. Sakamoto M., Siqueira J. Jr, Rôças I., Benno Y. Diversity of spirochetes in endodontic infections. // *J. Clin. Microbiol.*, 2009, 47 (5), 1352-1357,
45. Sakellariou P. Periapical actinomycosis: report of a case and review of the literature. // *Endod. Dent. Traumatol.*, 1996, 12 (3), 151-154,
46. Segura-Egea J., Martín-González J., Jiménez-Sánchez M., Crespo-Gallardo I., Saúco-Márquez J., Velasco-Ortega E. Worldwide pattern of antibiotic prescription in endodontic infections. // *Int. Dent. J.*, 2017, 17. doi: 10.1111/idj.12287. [Epub ahead of print],
47. Siqueira J. Jr. Endodontic infections: concepts, paradigms, and perspectives. // *Oral Surg. Oral Med. Oral Pathol. Oral Radiol. Endod.*, 2002, 94 (3), 281-293,
48. Siqueira J. Jr., Rôças I., Lopes H. Patterns of microbial colonization in primary root canal infections. // *Oral Surg. Oral Med. Oral Pathol. Oral Radiol. Endod.*, 2002, 93 (2), 174-178,
49. Siqueira J. Jr., Rôças I., Andrade A., de Uzeda M. *Peptostreptococcus micros* in primary endodontic infections as detected by 16S rDNA-based polymerase chain reaction. // *J. Endod.*, 2003, 29 (2), 111-113,
50. Siqueira J. Jr., Rôças I. *Campylobacter gracilis* and *Campylobacter rectus* in primary endodontic infections. // *Int. Endod. J.*, 2003, 36 (3), 174-180,
51. Siqueira J. Jr., Rôças I. Polymerase chain reaction detection of *Propionibacterium propionicus* and *Actinomyces radidentis* in primary and persistent endodontic infections. // *Oral Surg. Oral Med. Oral Pathol. Oral Radiol. Endod.*, 2003, 96 (2), 215-222,
52. Siqueira J. Jr., Rôças I. *Catonella morbi* and *Granulicatella adiacens*: new species in endodontic infections. // *Oral Surg. Oral Med. Oral Pathol. Oral Radiol. Endod.*, 2006, 102 (2), 259-264,
53. Siqueira J. Jr., Rôças I., Paiva S., Magalhães K., Guimarães-Pinto T. Cultivable bacteria in infected root canals as identified by 16S rRNA gene sequencing. // *Oral Microbiol. Immunol.*, 2007, 22 (4), 266-271,
54. Siqueira J. Jr., Rôças I. Bacterial pathogenesis and mediators in apical periodontitis. // *Braz. Dent. J.*, 2007, 18 (4), 267-280,
55. Siqueira J. Jr., Rôças I., Alves F., Silva M. Bacteria in the apical root canal of teeth with primary apical periodontitis. // *Oral Surg. Oral Med. Oral Pathol. Oral Radiol. Endod.*, 2009, 107 (5), 721-726,
56. Stashenko P., Yu S., Wang C. Kinetics of immune cell and bone resorptive responses to endodontic infections. // *J. Endod.*, 1992, 18 (9), 422-426,
57. Stojanović N. Krunić J., Popović B., Stojičić S., Zivković S. Prevalence of *Enterococcus faecalis* and *Porphyromonas gingivalis* in infected root canals and their susceptibility to endodontic treatment procedures: a molecular study. // *Srp. Arh. Celok. Lek.*, 2014, 142 (9-10), 535-541,
58. Sundqvist G., Eckerbom M., Larsson A., Sjögren U. Capacity of anaerobic bacteria from necrotic dental pulps to induce purulent infections. // *Infect. Immun.*, 1979, 25 (2), 685-693,
59. Tani N. Bacteriological and immunological studies on the mechanism of development of periapical lesion. Immunobiological activities and localization in periapical lesion of the cellular components from *Bacteroides buccae*. // *Kanagawa Shigaku.*, 1989, 23 (4), 451-468,
60. Tennert C., Fuhrmann M., Wittmer A., Karygianni L., Altenburger M., Pelz K., Hellwig E., Al-Ahmad A. New bacterial composition in primary and persistent/secondary endodontic infections with respect to clinical and radiographic findings. // *J. Endod.*, 2014, 40 (5), 670-677,
61. Vengerfeldt V., Špilka K., Saag M., Preem J., Oopkaup K., Truu J., Mändar R. Highly diverse microbiota in dental root canals in cases of apical periodontitis (data of illumina sequencing). // *J. Endod.*, 2014, 40 (11), 1778-1783,
62. Waltimo T., Sirén E., Torkko H., Olsen I., Haapasalo M. Fungi in therapy-resistant apical periodontitis. // *Int. Endod. J.*, 1997, 30 (2), 96-101,
63. Waltimo T., Kuusinen M., Järvensivu A., Nyberg P., Väänänen A., Richardson M., Salo T., Tjäderhane L. Examination on *Candida* spp. in refractory periapical granulomas. // *Int. Endod. J.*, 2003, 36 (9), 643-647,
64. Wang Q., Zhou X., Zheng Q., Wang Y., Tang L., Huang D. Distribution of *Porphyromonas gingivalis* fimA genotypes in chronic apical periodontitis associated with symptoms. // *J. Endod.*, 2010, 36 (11), 1790-1795,
65. Wayman B., Murata S., Almeida R., Fowler C. A bacteriological and histological evaluation of 58 periapical lesions. // *J. Endod.*, 1992, 18 (4), 152-155,
66. Zehnder M., Rechenberg D., Thurnheer T., Lüthi-Schaller H., Belibasakis G. FISHing for gutta-percha-adhered biofilms in purulent post-treatment apical periodontitis. // *Mol. Oral Microbiol.*, 2017, 32 (3), 226-235,
67. Zhang C., Du J., Peng Z. Correlation between *Enterococcus faecalis* and Persistent Intraradicular Infection Compared with Primary Intraradicular Infection: A Systematic Review. // *J. Endod.*, 2015, 41 (8), 1207-1213,
68. Zhu X., Wang Q., Zhang C., Cheung G., Shen Y. Prevalence, phenotype, and genotype of *Enterococcus faecalis* isolated from saliva and root canals in patients with persistent apical periodontitis. // *J. Endod.*, 2010, 36 (12), 1950-1955.

**Бактериальная картина хронических периодонтитов (обзор)**  
Амбарцумян С.Г., Татинцян В.Г., Андриасян Л.Г., Татинцян Л.В.

В обзорной статье анализируется научная литература по проблеме микробиологии хронических периодонтитов. Отмечается несомненная роль патогенных бактерий в развитии хронических воспалительных заболеваний периодонта, однако в последние годы выявляются новые и новые формы бактерий, которые могут быть ответственны за данную патологию. В частности, описывается значение некоторых вирусов и грибов. Кроме того, в настоящее время выяснено, что особенности бактериального состава находятся в определенных связях с течением и клиническими проявлениями хронических периодонтитов.

**Bacterial picture of chronic periodontitis (review)**  
Hambartsumyan S.G., Tatintsyanyan V.G., Andriasyan L.H., Tatintsyanyan L.V.

The review article analyzes scientific literature on the problem of the microbiology of chronic periodontitis. There is an undoubted role of pathogenic bacteria in the development of chronic inflammatory periapical diseases, but in the course of a half a year new and new forms of bacteria are identified that can be responsible for this pathology. In particular, the meaning of some viruses and fungi is described. In addition, it is now clear that the characteristics of the bacterial composition is in certain connections with the course and clinical manifestations of chronic apical periodontitis.

**Պարօդոնտի հիվանդությունների հաճախականությունը հղիության շրջանում**

*Հակոբյան Մ.Դ.*

*Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի օրթոպեդիկ ստոմատոլոգիայի ամբիոն*

Վճռորոշ բառեր՝ հղիություն, պարօդոնտի հիվանդություններ, հաճախականություն

Հղիության շրջանում պարօդոնտի հիվանդությունների ուսումնասիրման հիմնախնդիրն առնվազն ունի երկդարյա պատմություն, սակայն մինչ օրս մի շարք հարցեր դեռևս չեն գտել իրենց կլինիկա-փորձարարական հիմնավորումներն ու միարժեք լուծումները:

Մասնավորապես, մի կողմից ակնհայտ է, որ հղիությամբ պայմանավորված հորմոնալ և իմունաբանական խորը փոփոխություններն օրգանիզմում անպայմանորեն և այս կամ այն չափով պետք է անդրադառնան բակտերիալ ծագման ու քրոնիկական ընթացք ունեցող տարբեր ախտաբանական պրոցեսների վրա՝ հանգեցնելով դրանց, այդ թվում նաև պարօդոնտի բորբոքային հիվանդությունների, առավել ցայտուն կլինիկական դրսևորումներին (Романовская Л.Д. 1990; Carranza F. 1991; Thompson H. 1992; Чумакова Ю.Т. 1996; Krejci C., Bissada N. 2002): Մյուս կողմից, քիչ չեն նաև այն հեղինակները, որոնք պնդում են, թե հղիության ընթացքում տեղի ունեցող նշված շեղումներն ու փոփոխություններն ինքնին պայմաններ են ստեղծում կլինիկորեն առողջ պարօդոնտի հյուսվածքներում ախտաբանական պրոցեսների առաջացման ու զարգացման համար (Гноевая Л.В., Грудянов А.И. 1987):

Բավական ինտենսիվ ու նույնիսկ բևեռայնորեն հակադիր դիրքերից բխող գիտական քննարկումների առարկա է հանդիսանում նաև հղիության ընթացքի ու ծննդաբերության վրա պարօդոնտի տարածուն բորբոքային հիվանդությունների հավանական բացասական ազդեցության հիմնախնդիրը (Vettore M., et al. 2008; Calabrese N., et al. 2010; Badran Z., et al. 2015; Abariga S., Whitcomb B. 2016; Nazir M. 2017), որոնց շարքում առաջին հերթին պետք է հիշատակել վաղաժամ ծննդաբերությունները, անհաս ծնունդները, գեստացիոն շաքարախտը:

Համաճարակաբանական տվյալների զգալի ցրվածություն ու անհամաձայնություն է դիտվում նաև հղիության շրջանում պարօդոնտի բորբոքային հիվանդությունների տարածվածության հարցում: Սակայն, ըստ տասնամյակների առանձնացման պարագայում, կարելի է նկատել, որ տարեցտարի աճում է նշված հիվանդությունների տարածվածության ցուցանիշների բևեռացումը: Այսպես, եթե նախորդ դարի երկրորդ կեսում գինգիվիտներն ու պարօդոնտիտները հայտնաբերվում են հղիների գրեթե կեսի մոտ (Губаревская В.Л. 1975; Banoczy J., et al. 1978; Jago J. et al.

1984), ապա դարեվերջին ու արդի ժամանակաշրջանում արդեն խոսք է գնում այդ հիվանդությունների 80-90 % (Albrecht M. et al. 1987) և նույնիսկ 100 % (Баласанян Н.Д. 1991; Rosell F. et al. 1999) տարածվածության մասին:

Միննույն ժամանակ, մի շարք հեղինակներ գտնում են, որ հղիության հանգամանքը պարտադիր պայման չէ պարոզոնտի ախտաբանության զարգացման կամ դրա դրսևորումների խորացման համար, ինչի մասին, ըստ հեղինակների (Lopez-Perez R. et al. 1996) վկայում է դրանց ցածր տարածվածությունը հղիների մոտ /20-30 %/: C. Nabet et. al. (2010) կողմից հղիների մոտ տեղակայված պարոզոնտիտ հայտնաբերվել է 11,6 %, իսկ տարածուն բնույթի պարոզոնտիտ 10,8 % դեպքերում: L. Soucy-Giguère et. al. (2016) կողմից իրականացված կլինիկական ուսումնասիրությունները 15-24 շաբաթական հղիների միայն 45 %-ի մոտ է հայտնաբերել պարոզոնտի ախտաբանություն: H. Alchalabi et. al. (2013) 20 շաբաթական հղիների մոտ պարոզոնտի հիվանդությունները հայտնաբերել են 31 % դեպքերում, իսկ P. Kassab et. al. (2011) - մինչև 37,7 %, իսկ H. Le et. al. (2007) – 33,9 %: M. Delemotte et. al. (2013) նշում են քննարկվող անձանց մոտ պարոզոնտի հիվանդությունների 74 % տարածվածության մասին՝ նկատելով, որ սա շատ բարձր ցուցանիշ է: Գրեթե նմանատիպ տվյալներ են ներկայացնում նաև A. Sánchez et. al. (2007), որոնք նշում են գինգիվիտների 54 % և պարոզոնտիտների 23,9 % տարածվածության մասին: Իսկ H. Miyazaki et. al. (1991) պարոզոնտի ախտահարման խիստ բարձր տարածվածություն հայտնաբերել են թե՛ հղիների, թե՛ պտղաբեր տարիքի այլ կանանց մոտ /համապատասխանաբար 96 % և 95 % դեպքերում/ :

Տեսակետ է հնչում, որ հղիների մոտ պարոզոնտի կլինիկական կարգավիճակի գնահատականների նշված տարբերություններն առաջին հերթին պետք է բացատրել հենց իրեն՝ հղիության ընթացքի առանձնահատկություններով (Boland M., et. al. 2013): Մասնավորապես, հղիության տոքսիկոզը, հիպովիտամինոզները, ռեզուս-գործոնով պայմանավորված իմունիզացիան և այլնը զգալիորեն պայմանավորում են հղիների մոտ պարոզոնտի հիվանդությունների տարածվածությունն ու ախտաբանական պրոցեսի ծանրությունը (Васильева Р.П., Машенко И.С.1981; Gagliardi G. et al. 1982; Гноевая Л.В. 1988): Այս հարցում կարևորվում է շաքարային դիաբետի առկայությունը, որն, ըստ որոշ հեղինակների զգալիորեն մեծացնում է պարոզոնտի հիվանդությունների թե՛ տարածվածությունը, թե՛ ծանրությունը: Մասնավորապես, X. Xiong et. al. (2009) պարզել են, որ առողջ հղիների մոտ պարոզոնտի հյուսվածքների բորբոքումը հայտնաբերվում է 57,5 % դեպքերում, իսկ դիաբետի առկայության պայմաններում այն կտրուկ աճում է մինչև 77,4 %: Նկատենք, որ հետազոտությունն իրականացվել Միացյալ Նահանգներում և արձանագրել է պարոզոնտի հիվանդությունների բարձր տարածվածություն նույնիսկ տնտեսապես զարգացած երկրում: Հղիության շրջանում պարոզոնտի հյուսվածքների ախտահարման 40-50 % տարածվածության մասին են վկայում նաև այլ հեղինակների հետազոտությունների տվյալները (Novák T., et. al. 2009):

Բավական ուշագրավ հետազոտություն է ներկայացված Ջ. Եսայանի կողմից (2006), որը՝ յուրաքանչյուր հաջորդ հղիությանը զուգընթաց, նշում է պարոզոնտի հիվանդությունների տարբերակված կառուցվածքի, տարածվածության ու կլինիկական ընթացքի ընդհանուր պատկերի վատթարացման միտման մասին: Մասնավորապես, եթե առաջին հղիության շրջանում պարոզոնտի հիվանդությունների կառուցվածքում գերակշռել են գինգիվիտները /64,2 %/, ապա 3-4-րդ հղիությունների ժամանակ պարոզոնտի ծանր ախտահարումները՝ պարոզոնտիտները կազմել են շուրջ 85-90 %:

Որպես հղիության գինգիվիտի /պարոզոնտիտի/ հիմնական բնութագրիչներ ներկայացնելով լնդերի գերարյունությունը, այտուցը և արյունահոսության արտահայտված հակումը, որոշ հեղինակներ նշում են (Laine M. 2002; Taani D., et. al. 2003; Moss K., et. al. 2005), որ այս հիվանդությունների տարածվածությունը տատանվում է 35-100 % տիրույթում, ընդ որում, դրանց կլինիկական արտահայտվածությունը /ծանրությունը/ հղիության ժամկետի հետ մեկտեղ ստանում է առավել ծանր ընթացք:

Բավական սակավաթիվ են այնպիսի ուսումնասիրությունները, որոնք հղիների մոտ պարոզոնտի հիվանդությունների տարածվածության ու կլինիկական ընթացքի առանձնահատկությու-

յունները դիտարկում են կոնկրետ երկրում, քաղաքային ու գյուղական բնակչության մոտ տարբերակված սկզբունքի վրա, հետազոտվողների սոցիալ-տնտեսական պայմանների համատեքստում և նմանատիպ այլ պարամետրերի հիման վրա: Այսպես, N. Karunachandra et. al. (2012) նշում են, որ Շրի-Լանքայի գյուղական բնակչության շրջանում հղիների մոտ պարոդոնտի հիվանդությունները հայտնաբերվել են 60 % դեպքերում, այն դեպքում, երբ քաղաքային բնակչության միևնույն կոնտինգենտի մոտ այս ցուցանիշը կազմել է 73 %: Պայմանավորելով պարոդոնտի բորբոքային ախտահարումները հղիների սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական կարգավիճակով ու բերանի խոռոչի հիգիենայով, M. Piscoya et. al. (2012) նշում են, որ այս գործոնների անբարենպաստ իրավիճակի դեպքում նշված ախտահարումները կազմում են 11 %: Թուրքիայի հղիների շրջանում պարոդոնտի հիվանդությունների բուժման կարիքավորություն /ըստ CPITN-II գործակցի/ հայտնաբերվել է 73,5 % դեպքերում (Toygar H., et. al. 2007), իսկ Բրազիլիայում տարածվածության այս ցուցանիշը կազմել է շուրջ 64 % (Cota L., et. al. 2006), իսկ Տանզանիայում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է (Mumghamba E., et. al. 2006), որ հղիների 100 %-ի մոտ հայտնաբերվում է տարբեր աստիճանի արտահայտվածության լնդային արյունահոսություններ, որոնք ուղղակիորեն վկայում են պարոդոնտի ախտաբանության առկայության մասին:

Այսպիսով, պարոդոնտի հիվանդությունների հաճախականության տվյալների նման ցրվածությունը և հակասականությունը մենք հակված ենք առաջին հերթին բացատրելու այն հանգամանքով, որ տարբեր հեղինակների մոտ դիտվում են պարոդոնտի կլինիկական կարգավիճակի գնահատման մեթոդաբանության ու սկզբունքների էական տարբերություններ: Մասնավորապես, L. Souza et. al. (2016) նշում են, որ հղիների մոտ պարոդոնտի հիվանդությունները հայտնաբերվել են 16-17 % դեպքերում, սակայն այդ հիվանդությունների հայտնաբերման ու գնահատման մեթոդների շարքում հեղինակները նկարագրում են միայն պարոդոնտիտների ախտորոշումը ախտաբանական գրպանների խորության /4 մմ-ից ավելի/, լնդային միակցության կորստի /3 մմ-ից ավելի/ և գոնդավորման ժամանակ լնդային արյունահոսության հիման վրա: Միևնույն կլինիկական ցուցանիշների գնահատման պայմաններում Y. Xie et. al. (2013) նշում են պարոդոնտի հիվանդություններին բոլորովին այլ որակի տարածվածության մասին – մոտ 67 %: Երբեմն ախտորոշիչ ցուցանիշների նշված եռյակին ավելացվում է բերանի խոռոչի հիգիենիկ վիճակի գնահատումը (Muwazi L., et. al. 2014): Բացի այդ, մի շարք ուսումնասիրություններում համաճարակաբանական տվյալները չեն կրում համեմատական բնույթ, ինչը, մի կողմից, հնարավորություն չի ընձեռում ընդհանուր պատկերացումներ կազմել տվյալ պոպուլյացիայի մոտ պարոդոնտի հիվանդությունների ու դրանց տարատեսակների հիվանդաբանական կառուցվածքի մասին, իսկ, մյուս կողմից, հնարավոր չի լինում կատարել համեմատական գնահատում: Մի խումբ հետազոտություններ էլ՝ գործոնի ռիսկայնության հարաբերակցության հիման վրա, գնահատում ու արտացոլում են զուտ հղիության ազդեցությունը պարոդոնտի հիվանդության առաջացման ու զարգացման վրա (Prpic J., et. al. 2012):

Պետք է նկատել նաև, որ վերջին տասնամյակի ընթացքում գրեթե բացակայում են հղիության շրջանում պարոդոնտի հիվանդությունների համաճարակաբանությանը նվիրված հետազոտությունները, թեև, ինչպես արդեն նշվել էր, նախորդ շրջանի ուսումնասիրությունները բացահայտել էին պարոդոնտի ախտաբանության զգալի տարածվածություն հղիների մոտ:

#### **Գրականություն**

1. Баласаян А.Н. Эпидемиология основных стоматологических заболеваний и пути их профилактики у детей и беременных женщин Севанского бассейна Республики Армения. Автореф. дисс. канд. мед. наук., Ереван, 1991, - 19 с.,
2. Васильева Р.П., Машенко И.С. Показатели клинико-лабораторного обследования беременных с заболеваниями пародонта, иммунизированных резус-фактором. // Стоматология, 1981, № 5, с. 33 -35,
3. Гноевая Л.В., Грудянов А.И. Состояние тканей пародонта у женщин в период беременности. (Обзор литературы). // МРЖ, разд. XII, Стоматология, 1987, № 2, с. 6 – 9,
4. Гноевая Л.В. Клинико-иммунологические особенности заболеваний пародонта у беременных женщин. Автореф. дисс. канд. мед. наук., М., 1988,
5. Губаревская В.Л. О состоянии тканей десны у беременных. // Стоматология, 1975, № 1, с. 19 – 22,

6. Есаян З. В. Роль местных и общих эндокринных и иммунных расстройств в патогенезе болезней пародонта у беременных и лиц пубертатного возраста, Дисс. докт. мед. наук, Ереван, 2006, - 299 с.,
7. Романовская Л.Д. Состояние тканей пародонта у беременных с поздним токсикозом. Автореф. дисс. канд. мед. наук., М., 1990,
8. Чумакова Ю.Т. Обоснование принципов профилактики кариеса зубов и заболеваний пародонта у женщин в разные сроки беременности. Автореф. дисс. канд. мед. наук., Киев, 1996,
9. Abariga S., Whitcomb B.. Periodontitis and gestational diabetes mellitus: a systematic review and meta-analysis of observational studies. // *BMC Pregnancy Childbirth.*, 2016, 8, 16 (1), 344,
10. Albrecht M., Banoczy J., Baranyi E., Tamas G., Szalay J., Egyed J., Simon G., Ember G. Studies of dental and oral changes of pregnant diabetic women. // *Acta. Diabetol.*, 1987, 24, 1, 1-7,
11. Alchalabi H., Al Habashneh R., Jabali O., Khader Y. Association between periodontal disease and adverse pregnancy outcomes in a cohort of pregnant women in Jordan. // *Clin. Exp. Obstet. Gynecol.* 2013, 40 (3), 399-402,
12. Badran Z., Struillou X., Verner C., Clee T., Rakic M., Martinez M., Soueidan A. Periodontitis as a risk factor for systemic disease: Are microparticles the missing link? // *Med. Hypotheses*, 2015, 84 (6), 555-556,
13. Banoczy J., Orosz M., Gabris K., Nyarasy I., Rigo O., Schuder L. Investigation on the correlation of pregnancy, caries and gingivitis. // *Zahn. Mund. Kieferheilk. Zentralbl.*, 1978, 66, 6, 573-581,
14. Boland M., Hripcsak G., Albers D., Wei Y., Wilcox A., Wei J., Li J., Lin S., Breene M., Myers R., Zimmerman J., Papananou P., Weng C. Discovering medical conditions associated with periodontitis using linked electronic health records. // *J. Clin. Periodontol.*, 2013, 40 (5), 474-482,
15. Calabrese N., Calabrese A., Nibali L., Rosati A., Fiengo S., Di Renzo G. Is there any association between periodontitis and preterm low birth weight? // *J. Matern. Fetal. Neonatal. Med.*, 2010, 23 (11), 1288-1293,
16. Carranza F. *Clinical periodontology*, Philadelphia, 1991, - 1087 p.,
17. Cota L., Guimarães A., Costa J., Lorentz T., Costa F. Association between maternal periodontitis and an increased risk of preeclampsia. // *J. Periodontol.*, 2006, 77 (12), 2063-2069,
18. Delemotte M., Valcarcel J., Tramini P. Oral health and precariousness in pregnant women. // *Odontostomatol. Trop.*, 2013, 36 (141), 14-26,
19. Gagliardi G., Bucci E., Matarasso S. Gingival diseases during pregnancy. Clinical aspects and bibliographic review. // *Minerva. Stomatol.*, 1982, 31, 355-358,
20. Jago J., Chapman P., Aitken J., McEniery T. Dental status of pregnant women attending a Brisbane maternity hospital. // *Community Dent. Oral Epidemiol.*, 1984, 12, 6, 398-401,
21. Karunachandra N., Perera I., Fernando G. Oral health status during pregnancy: rural-urban comparisons of oral disease burden among antenatal women in Sri Lanka. // *Rural Remote Health*, 2012, 12, 1902. Epub 2012 Jul 9.
22. Kassab P., Colombier M., Kaminski M., Lelong N., Sixou M., Nabet C., EPIPAP (EPIde miological study on the relation between Periodontitis and Adverse Pregnancy outcomes) group. Impact of periodontitis definition in epidemiological research. Results from the EPIPAP study in postpartum women. // *Eur. J. Oral Sci.*, 2011, 119 (2), 156-162,
23. Krejci C., Bissada N. Women's health issues and their relationship to periodontitis. // *J. Am. Dent. Assoc.*, 2002, Mar, 133, 323-329,
24. Laine M.. Effect of pregnancy on periodontal and dental health. // *Acta Odontologica Scandinavica*. 2002, 60, 257-264,
25. Le H., Jareinpituk S., Kaewkungwal J., Pitiphat W. Increased risk of preterm birth among non-smoking, non-alcohol drinking women with maternal periodontitis. // *Southeast Asian J. Trop. Med. Public Health.*, 2007, 38 (3), 586-593,
26. Lopez-Perez R., Diaz-Romero R., Barranco-Jaubert A., Borges-Yanez A., Avila-Rosas H. Prevalence of dental caries, gingivitis and periodontal disease in pregnant diabetic women. // *Salud. Publica Mex.*, 1996, 38, 2, 101-109,
27. Miyazaki H., Yamashita Y., Shirahama R., Goto-Kimura K., Shimada N., Sogame A., Takehara T. Periodontal condition of pregnant women assessed by CPITN. // *J. Clin. Periodontol.*, 1991, 18 (10), 751-754,
28. Moss K., Beck J., Offenbacher S. Clinical Risk factors associated with incidence and progression of periodontal conditions in pregnant women. // *Journal Clinical Periodontology*, 2005, 32, 492-498,
29. Mumghamba E., Manji K., Michael J. Oral hygiene practices, periodontal conditions, dentition status and self-reported bad mouth breath among young mothers, Tanzania. // *Int. J. Dent. Hyg.*, 2006, 4 (4), 166-173,
30. Muwazi L, Rwenyonyi C., Nkamba M., Kutesa A., Kagawa M., Mugenyi G., Kwizera G., Okullo I. Periodontal conditions, low birth weight and preterm birth among postpartum mothers in two tertiary health facilities in Uganda. // *BMC Oral Health*, 2014, 28, 14, 42,
31. Nabet C., Lelong N., Colombier M., Sixou M., Musset A., Goffinet F., Kaminski M; EPIPAP Group. Maternal periodontitis and the causes of preterm birth: the case-control EPIPAP study. // *J. Clin. Periodontol.*, 2010, 37 (1), 37-45,
32. Nazir M. Prevalence of periodontal disease, its association with systemic diseases and prevention. // *Int. J. Health Sci. (Qassim)*, 2017, 11 (2), 72-80,
33. Novák T., Radnai M., Gorzó I., Urbán E., Orvos H., Eller J., Pál A. Prevention of preterm delivery with periodontal treatment. // *Fetal Diagn. Ther.*, 2009, 25 (2), 230-233,



34. Piscoya M., Ximenes R., Silva G., Jamelli S., Coutinho S. Periodontitis-associated risk factors in pregnant women. // Clinics (Sao Paulo), 2012, 67 (1), 27-33,
35. Prpić J., Kuis D., Pezelj-Ribarić S. Obesity and oral health--is there an association? // Coll. Antropol., 2012, 36 (3), 755-759,
36. Rosell F., Montandon-Pompeu A., Valsecki-Junior A. Simplified periodontal record for pregnant women. // Rev. Saude. Publica, 1999, 33, 2, 157-162,
37. Sánchez A., Bagniewski S., Weaver A., Vallejos N. Correlations between maternal periodontal conditions and preterm low birth weight infants. // J. Int. Acad. Periodontol., 2007, 9 (2), 34-41,
38. Soucy-Giguère L., Tétu A., Gauthier S., Morand M., Chandad F., Giguère Y., Bujold E. Periodontal Disease and Adverse Pregnancy Outcomes: A Prospective Study in a Low-Risk Population. // J. Obstet. Gynaecol. Can., 2016, 38 (4), 346-350,
39. Souza L., Cruz S., Gomes-Filho I., Barreto M., Passos-Soares J., Trindade S., Figueiredo A., Alves C., Coelho J., Vianna M. Effect of maternal periodontitis and low birth weight--a case control study. // Acta Odontol. Scand., 2016, 74 (1), 73-80,
40. Taani D., Habashneh R., Hammad M., Batieha A. The periodontal status of pregnant women and its relationship with socio-demographic and clinical variables. // J. Oral Rehabilitation, 2003, 30, 440-445,
41. Thompson H. Pregnancy and periodontal health. // J. N. Z. Soc. Per., 1992, 73, 16-18,
42. Toygar H., Seydaoglu G., Kurklu S., Guzeldemir E., Arpak N. Periodontal health and adverse pregnancy outcome in 3,576 Turkish women. // J. Periodontol., 2007, 78 (11), 2081-2094,
43. Vettore M., Leal Md., Leão A., da Silva A., Lamarca G., Sheiham A. The relationship between periodontitis and preterm low birthweight. // J. Dent. Res., 2008, 87 (1), 73-78,
44. Xie Y., Xiong X., Elkind-Hirsch K., Pridjian G., Maney P., Delarosa R., Buekens P. Change of periodontal disease status during and after pregnancy. // J. Periodontol., 2013, 84 (6), 725-731,
45. Xiong X., Elkind-Hirsch K., Vastardis S., Delarosa R., Pridjian G., Buekens P. Periodontal disease is associated with gestational diabetes mellitus: a case-control study. // J. Periodontol., 2009, 80 (11), 1742-1749.

#### **Частота заболеваний пародонта в период беременности**

Акопян М.Д.

Проблема изучения заболеваний пародонта в период беременности как минимум имеет двухвековую историю, однако до сих пор некоторые вопросы еще не нашли свое клинично-экспериментальное подтверждение и однозначное решение. Разбросанность и противоречивость данных по частоте заболеваний пародонта при беременности можно объяснить тем обстоятельством, что у разных авторов наблюдаются существенные различия в отношении методологии и принципов оценки клинического состояния пародонта. Нужно отметить, что последнее десятилетие почти отсутствуют исследования, посвященные частоте болезней пародонта у беременных, хотя предыдущие исследования обнаруживали весьма высокую их распространенность.

#### **Frequency of periodontal disease in pregnancy**

Hakobyan M.D.

The problem of studying periodontal diseases during pregnancy has at least a two-century history, but so far, some issues have not yet found their clinical-experimental confirmation and unequivocal solution. Scatter and inconsistency of data on the frequency of periodontal disease in pregnancy can be explained by the fact that different authors have significant differences in the methodology and principles of assessing the clinical condition of periodontal disease. It should be noted that in the last decade there are almost no studies on the incidence of periodontal disease in pregnant women, although previous studies have shown a very high prevalence.

## Հղիների մոտ պարոդոնտի հիվանդությունների ախտաճնության որոշ ասպեկտները. հորմոնները, պոլիամինները և տեղային միկրոշրջանառությունը

Հակոբյան Մ.Դ.

*Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի օրթոպեդիկ ստոմատոլոգիայի ամբիոն*

Վճռորոշ բառեր՝ հղիություն, պարոդոնտի հիվանդություններ, պոլիամիններ, հորմոններ, արյան միկրոշրջանառություն

Թեև, պարոդոնտի հիվանդություններն ընդհանրապես և հղիների մոտ՝ մասնավորապես, հիմնականում պայմանավորված են ատամնային նստվածքաշերտերով ու դրանցում ախտածին մանրէների պարունակությամբ, այնուամենայնիվ, այս հիվանդությունների ախտաճնական մեխանիզմներում էական նշանակություն է տրվում հղիության շրջանում տեղի ունեցող անոթա-յին, նյութափոխանակային ու հորմոնալ փոփոխություններին (Lopez N., et. al. 2002; Anwar N., et. al. 2016): Այսպես, բազմաթիվ հեղինակներ գտնում են, որ միայն ախտածին մանրէների ներկայությունը բավարար պայման չի հանդիսանում պարոդոնտի հիվանդության զարգացման համար, այլ անհրաժեշտ է լրացուցիչ գործոնների ազդեցությունը, որի հետևանքով պարոդոնտալ հյուսվածքը ընկալունակ է դառնում ախտածինների հանդեպ, և որպես այդպիսիք առաջին հերթին նշվում է հորմոնալ խանգարումների նշանակությունը (Mascarenhas P., et. al. 2003): Հեղինակները՝ հիմնվելով առկա գիտական տվյալների վրա, աղյուսակի տեսքով ներկայացնում են մի շարք հորմոնների ազդեցության մանրամասները պարոդոնտի հյուսվածքի վրա, որի վրա որոշակի փոփոխություններով ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք նաև մենք /աղյուսակ 1/:

Աղյուսակ 1.

*Որոշ հորմոնների ազդեցությունը պարոդոնտի վրա*

<i>Հորմոնը</i>	<i>Ազդեցությունը</i>
<i>Էստրոգեն</i>	<i>Ատամնային նստվածքաշերտերի ավելացում, բորբոքամետ ցիտոկինների արտադրության ընկճում, T-բջջային միջնորդմամբ բորբոքման նվազեցում, լեյկոցիտների սուպրեսիա, պոլիմորֆոնուկլեարների քեմոտաքսիսի ընկճում և ֆագոցիտոզի խթանում</i>
<i>Պրոգեստերոն</i>	<i>Պրոստագլանդինների սինթեզի խթանում, պոլիմորֆոնուկլեարների քանակի ավելացում, կոլագենային և ոչ կոլագենային սպիտակուցների սինթեզի խաթարում, պերիոդոնտային կապանի ֆիբրոբլաստների մետաբոլիզմի խաթարում, անոթների թափանցելիության մեծացում</i>
<i>Անդրոգեններ</i>	<i>Օստեոբլաստների ու պերիոդոնտալ ֆիբրոբլաստների կողմից հիմնական նյութի սինթեզի խթանում, օստեոբլաստների տարբերակման ու պրոլիֆերացիայի խթանում, IL-6-ի և պրոստագլանդինների սինթեզի ընկճում, օստեոպորոտ-զերինի խտության աճ</i>

Կանանց օրգանիզմում հորմոնալ փոփոխությունները էապես մեծացնում են պարոդոնտի հիվանդությունների առաջացման ու զարգացման հավանականությունը (Güncü G., et. al. 2005; Bilinska M., Sokalski J. 2016): Լնդերի ու ամբողջ պարոդոնտի բորբոքային ախտահարումներ դիտվում են դաշտանի, դաշտանադարի, օվուլյացիայի և, իհարկե, հղիության ընթացքում (Markou E., et. al. 2011; Nazir M. 2017):

Հղիների գինգիվիտը հաճախ ընթանում է լնդի գերաճի ուղեկցությամբ (Ермакова Ф.Б., Губаревская В.Л. 1974; Рыбаков А.И., Иванов В.С. 1980; Tumini V. et al. 1998): Նման համեմատա-կան առաձևահատկությունը սովորաբար մասնագետները բացատրում են հորմոնային համա-կշռման խանգարումներով (Güngörmüş M. et al. 2002, Rabinerson D. et al. 2002): Այսպես, պարզված է (Lundgren D. 1969; Bocskay I. et al. 1970; Klimm W., Ihl I. 1972), որ գերաճած լնդային հյուսվածքը

հարուստ է բորբոքային բջիջներով ու նեյտրոֆիլներով, ինչպես նաև պրոլիֆերացվող ֆիբրոբլաստներով ու արագ զարգացող մազանոթային ցանցով: Հղիության ընթացքում առաջացած լնդային գերաճը որոշ հեղինակներ նույնիսկ փորձում են դասել անոթային էպուլիսների շարքին (Ермакова Ф.Б., Губаревская В.Л. 1980): Իր հերթին, ծննդաբերությունից հետո հաճախակի դիտվող լնդային եզրի կլինիկական կարգավիճակի բարելավումը հիմք է տալիս մի շարք հետազոտողներին ենթադրելու գերաճական պրոցեսների զարգացման նյարդա-հումորալ մեխանիզմների մասին (Mieler I., Nitschke U. 1968; Чучмай Г.С. 1969; Samant A., DeSciscio P. 1991):

Առանձնահատուկ նշանակություն է տրվում ընկերքային ծագման էստրոգենների ու պրոգեստերոնի քանակների ավելացմանը (Ketelbant R. 1972, Moniaci D. et al. 1990): Հղիության ընթացքում պրոգեստերոնի քանակը ավելանում է մոտ 10, իսկ էստրոգենի քանակը մոտ 20 անգամ (Mascarenhas P., et. al. 2003): Ընդ որում, էստրոգենի և պրոգեստերոնի սինթեզի ավելացումը հանգեցնում է անոթային թափանցելիության մեծացմանը, այտուցների առաջացմանը, գինգիվիտների ու պարոդոնտիտների զարգացմանը (Gürsoy M., et al. 2008; Straka M. 2011): Նշվում է նաև (Klinger G. 1982; Zachariasen R. 1993), որ հղիության ընթացքում այդ հորմոնների ավելացումը հանգեցնում է լնդային էքսուդացիայի ու բորբոքման ինտենսիվացմանը, ընդ որում, հեղինակները չեն բացառում (Tsami-Pandi A. 1989; Merglova V., et. al. 2012), որ հորմոնները պարոդոնտի հյուսվածքների վրա ազդում են տեղային այլ գրգռիչների /ատամնային նստվածքներ/ նկատմամբ լնդի բորբոքային պատասխանի փոփոխմամբ:

Հատուկ ուշադրության են արժանի այն հետազոտությունները, որոնք փորձ են կատարում ուսումնասիրել ու բացահայտել որոշակի պատճառային ու ախտածնական կապերը տարբեր հավանական գործոնների միջև: Մասնավորապես՝ հաշվի առնելով այսպես կոչված գեստացիոն շաքարային դիաբետի բավական բարձր հաճախականությունը հղիների մոտ (Hayes C. 2009), որոշ հեղինակներ գնահատել են փոխադարձ կապերը պարոդոնտի ախտաբանության, շաքարախտի ու հորմոնալ խանգարումների միջև (Seraphim A., et. al. 2016):

Մի շարք հետազոտություններ նվիրված են հղիության տարբեր ժամանակահատվածներում հորմոնների պարունակությանը պարոդոնտալ շրջանի հեղուկներում /թուք, լնդային հեղուկ/ ու տեղային հյուսվածքների վրա դրանց ազդեցության հավանական մեխանիզմներին: Պարզված է (Zaki K. et al. 1984), որ թքում էստրադիոլի ու պրոգեստերոնի քանակները զգալիորեն ավելանում են հղիության 3-րդ տրիմեստրի ընթացքում, որոնք կորելացվում են պարոդոնտի հյուսվածքների կլինիկական ախտանիշների արտահայտվածության հետ: Ընդ որում, այս կապը բացատրվում է մի քանի հանգամանքներով, մասնավորապես ենթադրվում է, որ լնդային հյուսվածքը պարունակում է սպեցիֆիկ ընկալիչներ ստերոիդ հորմոնների նկատմամբ, ինչը նպաստում է համապատասխան ախտաբանական երևույթների զարգացմանը (Staffolani N. et al. 1989; Reynolds M., et. al. 2004; Gürsoy M., et. al. 2013), նաև այն, որ լինդը յուրատեսակ թիրախ-օրգան է հանդիսանում էստրոգենների ու պրոգեստերոնի համար (Vittek J. et al. 1982; Jonsson D., et. al. 2004), ընդ որում հորմոնները կապող ընկալիչները տեղակայված են էպիթելի ու շարակցական հյուսվածքների բջիջներում, ինչպես նաև մազանոթների էնդոթելիալ բջիջներում: Բացի անոթային թափանցելիության մեծացումն ու էքսուդացիայի արագացումը, նշված հորմոնները հանգեցնում են պրոստագլանդինների սինթեզին, բջջային ռեզենտրացիայի ու կերատինիզացիայի ընկճմանը, որոնք բերջին հաշվով կտրուկ նվազեցնում են էպիթելի անջրպետային ֆունկցիան (Абрахам-Иппаин Л. и соавт. 1996):

Հղիության գինգիվիտի զարգացման հարցում պրոգեստերոնի ազդեցությունը բացատրվում է նաև այլ մեխանիզմներով: Այսպես, գտնում են, որ հավանական մեխանիզմներից մեկը կարող է լինել պրոգեստերոնի ազդեցությունը մատրիքսային գլիկոզամինոգլիկանների ու կոլագենի (Willershhausen B. et al. 1991), ինչպես նաև պարոդոնտի միկրոշրջանառության վրա (Lindhe J., Branemark P. 1968; Lundgren D., Lindhe J. 1970), ինչի արդյունքում խանգարվում է հյուսվածքների կողմից թթվածնի յուրացումը (Saleh F. et al. 1983): Ընդհանրացնելով սեռական հորմոնների ազդեցության ուսումնասիրությունը պարոդոնտի հյուսվածքների վրա՝ M. Wu et. al. (2015) գալիս են այն եզրահանգման, որ պարոդոնտն այսպես կոչված «նպատակային» հյուսվածք է էստրոգենների ու պրոգեստերոնի համար: Ավելին, այս նույն հեղինակները գտնում են, որ հիշատակ-

ված հորմոնները հղիության ընթացքում նպաստում են լնդի բորբոքմանը անկախ բերանի խոռոչի հիգիենիկ վիճակից ու լնդային հեղուկում բորբոքամետ ցիտոկինների /IL-1 $\beta$ , TNF- $\alpha$ / բարձր մակարդակների առկայությանը (Wu M, et. al. 2016):

Սակայն շատերը առաջ են քաշում այն տեսակետը (Piscoya M., et. al. 2012), որ նշված փոփոխությունները չունեն ինքնուրույն ախտածնական նշանակություն, և դրանց ակտիվությունը /բարձր մակարդակները/ պայմանավորում են ախտածին մանրէների ակտիվության դրսևորումը: Այսպես, սեռական հորմոնների մակարդակի բարձրացումը, այդ թվում՝ բերանի խոռոչի կենսահեղուկներում, նպաստում է ախտածին անաէրոբ մանրէների գաղութացմանը (Kornman K., Loesche W. 1980; Cimasoni G. 1983; O'Hehir T. 1991), որոնցից շատերը նույն այդ հորմոններն օգտագործում են որպես սնման աղբյուր: Ընդ որում, մետաբոլիզացնելով հորմոնները բակտերիաները լուծում են ոչ միայն սնման, այլև օրգանիզմի հակամանրէային գործոններից պաշտպանության խնդիրը, ուստի որոշ բակտերիաներ իրենք են խթանում այդ հորմոնների արտադրությունը լնդային ֆիբրոբլաստների կողմից (Soory M. 2000):

Բավական լայնածավալ հետազոտություններ են իրականացված հորմոնների ու տեղային իմուն բաղադրիչների փոխկապակցված դրական ու բացասական ազդեցության ուսումնասիրման ուղղությամբ: Չափաբաժնային կախվածություններ են բացահայտվել պրոզեստերոնի և ցիտոկինային համակարգի տարբեր ներկայացուցիչների միջև, ընդ որում, եթե այդ հորմոնը խթանում է հյուսվածքներում բորբոքամետ ցիտոկինների /հատկապես IL-1-ի/ և պրոստագլանդինների սինթեզը, ինչպես նաև քանակական ու որակական սուպրեսիվ ազդեցություն ունի T- և B-բջջային սուբպոպուլյացիաների, մակրոֆագերի ու գրանուլոցիտների վրա, ապա այդ նույն հորմոնը ընկճում է այսպես կոչված «բարենպաստ» ազդեցությամբ օժտված գործոնների սինթեզն ու ակտիվությունը՝ առաջին հերթին IL-6-ի (Hartzer R. et al. 1971; Raber-Dulacher J. et al. 1991; Aboul-Dahab O. et al. 1994; Lapp C. et al. 1995):

Վերջին տարիներին հատուկ ուշադրություն է հրավիրվում հղիության ընթացքում պոլիամինների ֆիզիոլոգիական ու ախտածնական ազդեցության վրա: Պոլիամինները /սպերմին, սպերմիդին, պուտրեսցին/ դրանք պոլիկատիոնային մոլեկուլներ են, որոնք առկա են բոլոր էուկարիոտիկ ու պրոկարիոտիկ բջջներում: Պոլիամինները հանդիսանում են որոշ ամինաթթուների /արգինին, պրովին, մեթիոնին/ նյութափոխանակային արգասիքները, որոնք անջատվում են դեկարբոքսիլազային ֆերմենտների ազդեցությամբ: Պոլիամինները խթանում են բջջների պրովիֆերացիան, միտոզը, որոշ սպիտակուցների և ԴՆԹ-ի սինթեզը, կարգավորում են ապոպտոզի, օքսիդացիոն սթրեսի և անգիոգենեզի պրոցեսները, ուստի և դրանք կարևոր դեր են կատարում հղիության ու պտղի զարգացման ընթացքում (Lefèvre P., et. al. 2011; Lenis Y., et. al. 2017): Կատարված են համեմատական հետազոտություններ հղիության տարբեր ընթացքների պարագայում կնոջ տարբեր կենսաբանական միջավայրերում պոլիամինների պարունակության, դրանց մետաբոլիզմի առանձնահատկությունների ուսումնասիրման ուղղությամբ: Այսպես, պարզվել է (Basystyi O. 2016), որ՝ ի տարբերություն ֆիզիոլոգիական ընթացքի հղիության, պտղի ներարգանդային զարգացման կասեցման դեպքում դիտվում է էրիթրոցիտներում պուտրեսցինի քանակի զգալի ավելացում, իսկ սպերմինն ու սպերմիդինը ցուցաբերում են քանակական պարունակության էական նվազում: Վաղաժամ ծննդաբերությունների դեպքում պոլիամինների քանակը մայրական կաթում զգալիորեն գերազանցել է բնականոն ժամկետներում ծննդաբերած կանանց մայրական կաթից (Plaza-Zamora J., et. al. 2013): Վաղաժամ ծննդաբերություններն ուղեկցվել են պոլիամինների մետաբոլիզմի ինրենսիվության աճի ցուցանիշներով, ինչի մասին վկայել է դրանց ացետիլացված ձևերի /ացետիլպուտրեսցին և այլն/ գերակշռումը արյան մեջ (Alexandre-Gouabau M., et. al. 2013):

Ներկայացվող գրականության տեսության մեթոդաբանական ուղղվածությունից ելնելով, դիտարկենք այն գիտական տեղեկատվությունը, որը վերաբերվում է պոլիամինների ֆունկցիոնալ կապը անգիոգենեզի /նաև միկրոշրջանառության/ ու հորմոնալ փոփոխությունների հետ հղիության ընթացքում, ինչպես նաև հիմնախնդրի ստոմատոլոգիական ասպեկտներին: Նախ, նշենք որ նման հետազոտությունները խիստ սակավաթիվ են, կրում են դրվագային բնույթ, ինչը հնարավորություն չի տալիս կառուցել պոլիամինների, հղիության, պարօդոնտալ հիվանդութ-

յունների ու հորմոնալ մակարդակի միջև հավանական կապերի շղթան: Սպերմինը և սպերմիդինը ցուցաբերում են արտահայտված վազոդիլատացիոն ազդեցություն պոռտալարի անոթների վրա, ինչը խոսում է պլացենտար միկրոշրջանառության մեջ այս միացությունների կարգավորիչ մասնակցության մասին (Ravikumar N., et. al. 2004):

